

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԶԻՆԱԴԱԴԱՐ

Միացել ազգերու կազմակերպության Համաշխարհային սնունդի ծրագիրը յայտարարեց, թե Կազախի մեջ պետք է յայտարարուի մարդասիրական զինադադար՝ անօթության առաջը անելու համար: Կազախի հիւսիսային կողմը երեխաներ մահացան չորության ու անօթության պատճառով:

ԴՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Ըստ լիբանանեան հաւաստի աղբիւրներու, մնայուն հաղորդակցութիւն կայ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի, Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան նախկին նախագահ Ուսլիտ ժոմպլաթի եւ Ազգային ազատ հոսանքի նախագահ Ժըպրան Պասիլի միջեւ: Հիմնական օրակարգն է նախագահի ընտրութիւնը: Պըրրիի եւ Պասիլի միջեւ յարաբերութեան զարգացումը իր դրական հետքը պիտի ձգէ երկրի ընդհանուր քաղաքական վիճակին վրայ, սկսելով նախագահի ընտրութենէն:



ՄԻՐՈՆ ՈՒՐԱԿՈՑՈՒՅԱԲ

Իսրայէլեան աղբիւրներ յայտարարեցին, թէ հրթիռներ ինկան «Միրոն» լեռան ու «Քրիաթ Շմոնա»ի վրայ: Իսկ երեք իսրայէլացիներ վիրաւորուեցան «Պէյթ Յիլալ»ի մէջ, «Քրիաթ Շմոնա»ի մօտ, երբ Լիբանանէն եկած անօդային թռչող սարք մը պայթեցաւ:

ՈՒՐԱԿՈՑՈՒՄ ՀԱՐԱՄԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ

Երկէ հարաւային Լիբանանի Շիապի գիւղին մէջ երկու ինքնաշարժներ թիրախ դարձան իսրայէլեան ռմբակոծումի: Կան զոհեր ու վիրաւորներ: Իսկ Այն Պաւլ գիւղին մէջ տեղի ունեցած ռմբակոծումին պատճառով անձ մը զոհուեցաւ ու երկու հոգի փրկուեցան:




ՅԻՍՈՒՆ ՀՈԳԻ ԱՆՁՆԱՍՊԱՆ

7 Հոկտեմբերին «Նովա» հանդէսին մասնակցած անձերէն մէկը յայտարարեց, թէ այդ հանդէսին մասնակցած անձերէն յիսուն հոգի, որոնք ակնատես դարձած էին «Համաս»ի յարձակումին, անձնասպան եղան հոգեկան խանգարումի պատճառով: Ըստ իսրայէլեան «Հարթեց» օրաթերթին, իսրայէլեան ուղղաթիռներն են որ կրակ բացին մասնակցողներուն վրայ, որովհետեւ պաղեստինցի զինեալները խառնուած էին անոնց: 50 անձնասպանական արարքները արձանագրուած էին երկու ամիս առաջ: Ըստ ակնատեսին, այդ թիւը ներկայիս կրնայ աւելցած ըլլալ:



ԻՐԱՆ ՊԻՏԻ ԶԿԱՐԵՆԱՅ ՓՎԱԵԼ

Իսրայէլի պաշտպանութեան նախարար Եռավ Կալանթ յայտարարեց, թէ Իրան ձախողեցաւ իր յարձակումին մէջ ու ան պիտի չկարենայ զսպել Իսրայէլը: Ըստ Կալանթի, Միջին Արեւելքի օդը բաց է իրենց համար ու իրենք կրնան ազատօրէն գործել ուր որ կ'ուզեն:



ՄԵՇ ԾՆՆՈՒՄ

Իսրայէլի ռատիոկայանը հաղորդեց, թէ Արեւմուտքի ղեկավարներու կողմէ մեծ ճնշում կը բանեցուի Իսրայէլի ղեկավարութեան վրայ՝ հակադարձելու համար Իրանին կամ հակադարձութեան պարագային բաւականաւա՛ր սահմանափակ հակադարձութեամբ մը: Վարչապետ Պենիամին Նեթանիահու չի պատասխաներ հեռաձայնային հաղորդակցութեան, զիջում չկատարելու համար:



ՈԱՅԻՍԻ-ՓՈՒԹԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ



Իրանի նախագահ Իպրահիմ Ռայիսի հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցաւ Ռուսական Դաշնութեան նախագահ Վլատիմիր Փութինի հետ: Ռայիսի յայտարարած է, թէ Իրան չի փափաքիր մագլցում Միջին Արեւելքի շրջանին մէջ ու Իրանի քայլերը սահմանափակ էին: Իր կողմէ, նախագահ Փութին բոլոր կողմերուն կոչ ուղղեց զսպուածութիւն ցուցաբերելու: Երկու նախագահները կոչ ուղղեցին Կազախի մէջ լուծում գտնելու պաղեստինեան տագնապին:

ՊԷՏԵ Ե ՊԱՏՐԱՍ ԸԼԼԸԼ

Իրանի առաջնորդ սեյիտ Ալի Խամենեյի գրասենեակը յայտարարեց, թէ ան ստացած է նամակ Միացեալ Նահանգներէ՝ վստահեցնելու համար թէ հանդարտեցումն է ուզուածը: Սակայն, Խամենեյի նկատի չէ առած այդ նամակը եւ պահանջած է Իրանի բարձրաստիճան ղեկավարութենէն միշտ պատրաստ ըլլալ, անակնկալի առջեւ չգտնուելու համար:



ՍԱՌԵՑՈՒՄ ԲԱՌԸ ՉԷ ԳՈՐԾԱԾԱԾ

ՀԱՊԿ-ի ընդհանուր քարտուղար Իմանկալի Թասմակամպեթով իր տուած հարցազրոյցին մէջ մերժած է օգագործել «սառեցում» բառը Հայաստանի անդամակցութեան պարագային: Ան հաստատած է, որ Հայաստանի Հանրապետութիւնը նուազեցուցած է իր մասնակցութիւնը կազմակերպութեան գործունեութեան մէջ: Քարտուղարը հաստատած է, որ «Սառեցում»ի յօլած գոյութիւն չունի կազմակերպութեան կանոնագրութեան մէջ: Ըստ քարտուղարին, ներկայիս հարաւային Կովկասի մէջ ապահովական մագլցումի վտանգ կայ: Ան աւելցուցած է, որ կազմակերպութիւնը միշտ պատրաստ է իր անդամներուն ապահովական հարցերը լուծելու:



ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՉԵՆՔՈՎ

Հայաստանի Հանրապետութեան մէջ Իրանի արտակարգ եւ լիազօր դեսպան Մահտի Սուպիանի յայտարարեց, թէ Երեւանի մէջ գործող կարգ մը եւրոպացի դեսպաններ կը տարածեն միակողմանի կարծիք Իսրայէլի դէմ Իրանի կատարած վերջին յարձակումին առնչութեամբ: Ըստ դեսպանին, անոնք ճիշդ կը թափեն ապակողմնորոշելու հայկական հանրային կարծիքը: Ան հաստատեց, որ անոնց խորհուրդ կու տայ Հայաստանը չներքաշել իրենց աշխարհաքաղաքական հակամարտութիւններուն մէջ:



Ըստ դեսպանին, Հայաստանի մէջ գիտեն Իսրայէլի կատարած ժխտական դերը Ղարաբաղի երկրորդ պատերազմի ընթացքին ու հայ զինուորներու սպանութիւնը իսրայէլեան զէնքով: Երկու չափ երկու կշիռի քաղաքականութիւնը յաջողութիւն չի բերեր զայն գործադրողին: Ահաբեկչութեան լաւ կամ վատը չկայ: Այս երկու չափ երկու կշիռի քաղաքականութիւնն է որ կը քաջալերէ Իսրայէլը շարունակելու իր ժխտական քաղաքականութիւնը: Իրանի ուղերձը միշտ եղած է խաղաղութեան ու կայունութեան տարածում ու պահպանում:

ԾԵԾԿՈՏՈՒՄ ԿՐԱՍԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԵՋ

Կրաստանի խորհրդարանին մէջ ծեծկռուտ տեղի ունեցաւ: Ըստ իշխող կուսակցութեան պատգամաւորներուն, ոչ-կառավարական այն կազմակերպութիւնները, որոնց ֆինանսատրուումն 20 առ հարիւրէն աւելին արտաքին է, պետք է համարուին օտար կազմակերպութիւններ: Այս օրէնքին դէմ են երկրին նախագահը եւ ընդդիմադիր կուսակցութիւնը, որոնք այս քայլը կը համարեն դրդուած Ռուսիայէն ու զայն դէմ կը համարեն եւրոպական արժէքներուն, որոնք երկիրը պիտի առաջնորդեն Եւրոպական միութեան անդամակցութեան:



Մ.Ա.Կ.-Ը ԿՈՉ ԿՈՒՂԸ

Միացեալ ազգերու կազմակերպութեան մարդկային իրաւանց հարցերու յանձնակատարութիւնը կոչ ուղղեց Իսրայէլի կառավարութեան չօժանդակելու գաղութարարներու յարձակումներուն գրաւեալ Արեւմտեան Ափի բնիկ պաղեստինցի բնակչութեան վրայ: Ըստ յանձնակատարութեան, Իսրայէլ որպէս գրաւող ուժ պատասխանատու է շրջանի բնակչութեան ապահովութեան: Երկէ, իսրայէլացի գաղութարարներ երկու պաղեստինցի երիտասարդներ սպաննած էին փամփուշտով գրաւեալ Արեւմտեան ափին մէջ:



Հայ Բաղաքական Երեք Կուսակցութիւններ

109- Ամենակ
Հայոց Ցեղասպանութեան

Բայլարշա

Չահերթ


Երեքշաբթի 23
Ապրիլ 2024
Երեկոյեան ժամը 7:00-ին

Պուրճ Համուտէն
Անթիլիասի Մայրավանք

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԻՏԻ ԸՆԴՈՒՄՆԱԿԷ ԺՆՎԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՆԽԱՐԳԻԼՄԱՆ ԴՐՈՇՆԱԿԱԿԻՐ ԸԼԼԱՆ» ԸՍԱԾ Է ԱԺ ՓՈԽՆԱԽԱԳԱՐՃ

Հայաստանը կը փափաքի, որ աշխարհի մէջ ոչ մէկը իր կրօնքին, լեզուին, մաշկի գոյնին, այլակարծութեան համար հետապնդվի, առաւել եւս ցեղասպանուի:

Ազգային ժողովի արտահերթ նիստին այս մասին ըսաւ Ազգային ժողովի նախագահի տեղակալ Յակոբ Արշակեանը՝ 3 Օգոստոսը Սինճարի եզտին եղանակով ցեղասպանութեան գոհերու յիշատակի օր սահմանելու մասին նախագիծի ընկերակցութեամբ ժամանակ:



«Մենք համերաշխութեան խօսք կը յղենք եզտի ժողովուրդին, մեր ապրումակցունը կը յայտնենք՝ որպէս միանման ճակատագիր ունեցած ժողովուրդ: Մենք սիրոյ եւ հանդուրժողականութեան ուղերձ կը յղենք մեր այսօրուան որոշմամբ: Մենք կը փափաքինք, որ աշխարհի մէջ ոչ մէկը իր կրօնքին, լեզուին, մաշկի գոյնին, այլակարծութեան համար հետապնդվի, առաւել եւս ցեղասպանուի: Մենք դատապարտման մեր խօսքը կ'ըսենք»,- ըսաւ Արշակեանը:

Անոր խօսքով՝ Հայաստանի Հանրապետութիւնը միջազգային տարբեր հարթակներու վրայ մշտապէս հանդէս եկած է որպէս ցեղասպանութիւններու դատապարտման, կանխարգելման դրօշակակիր:

«Մենք պիտի շարունակենք այդպիսին ըլլալ, որովհետեւ մենք կը փափաքինք, որ աշխարհի մէջ ժողովուրդները երբեք չհարձանան մեր ճակատագրին, եզտիներու, յոյներու, ասորիներու ճակատագրին:

Եւս մէկ անգամ կ'ուզեմ Ազգային ժողովի անունէն, եւ այս օրինակով ընդունամք՝ Նաեւ հայ ժողովուրդին անունով, մեր համերաշխութիւնը, սերը, կարեկցանքը, ապրումակցունը յայտնել եւ կ'ուզեմ, որ իմանաք, որ մենք ձեր կողքին կանգնած ենք, ինչպէս դուք մեր կողքին կանգնած էք: Եւս մէկ անգամ իմ յարգանքի տուրքը կը մատուցեմ աշխարհի ցեղասպան բոլոր ժողովուրդներու գոհերու յիշատակին»,- եզրափակեց Արշակեանը:

Հայաստանի խորհրդարանը առաջին ընթացքով ընդունած է 3 Օգոստոսը որպէս Սինճարի մէջ եզտիներու ցեղասպանութեան գոհերու յիշատակի օր սահմանելու նախագիծը: Նախագիծին միաձայն կողմ քուէարկած է 88 պատգամաւոր:

ՄԱԿ-Ի ԴԱՏԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԳՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ. «ԱՄԵՐԻԿԱՆ ԼԵՆԻՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՑԱԾ ՅԵՂԱՅԻՆ ԶՏՈՒՄԸ Կ'ԱՆՈՒՄՆԵՆ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ»

ՄԱԿ-ի դատարանին մէջ Հայաստանի ներկայացուցիչ Փիեռ Տ'արկենը յայտարարած է, որ «Հայաստան ընդդէմ Ատրպէյճանի» գործով լուսններու ընթացքին ատրպէյճանական կողմը կը ձգտի քննարկումները դուրս թողելու Հայաստանի որոշ պնդումներ ու պահանջներ, որոնք կը վերաբերին Ատրպէյճանի կողմէ հայերու նկատմամբ իրականացուած բռնութիւններուն:



Ան նշեց, որ Ատրպէյճանի երկրորդ նախնական առարկութեամբ փորձ կը կատարուի քննարկումներ դուրս թողել Հայաստանի որոշ պնդումներ Ատրպէյճանի կողմէ հայերու կամայական ազատագրման, հայերու հարկադիր անհետացումներու վերաբերեալ, ինչպէս նաեւ Հայաստանի պահանջները հայերու նկատմամբ բռնութեամբ կատարուած տարբեր գործողութիւններու վերաբերեալ:

«Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը ցեղային հակամարտութիւն է, քանի որ երբեք տասնամեակ շարունակ տարածքային ամբողջականութեան հողի ներքոյ Ատրպէյճանը մերժեց ընդունել իրենց նախնիներու հողերուն վրայ ապրող հայերու ինքնորոշման իրաւունքը եւ դաժանաբար վերջ դրաւ այդ հարցին: Ատրպէյճանի նախագահը այդ անուանած է ազատագրման պատերազմ կամ հայրենական պատերազմ: Ատրպէյճանը այդ պատերազմին ամբողջովին ցեղային գտման ենթարկեց Լեռնային Ղարաբաղը՝ արհամարհելով Արդարադատութեան միջազգային դատարանին որոշումները»,- ըսաւ Փիեռ Տ'արկենը:

Անոր խօսքով՝ Լեռնային Ղարաբաղի մէջ անձեր թիրախաւորուած են միայն անոր համար, որ հայ են:

ԱՐԱՐԱՍ Տնտեսական

ԼԻԲԱՆԱՆ ԲՆԱԿԵՑՈՒՄԻ ՎԱՐԿ

Վերջին տարիներուն, մանաւանդ 2019 թուականին սկսած տնտեսական տագնապէն ետք դրական գործունեւոր չկային Լիբանանի մէջ: Ներկայիս այդ վիճակը սկսած է փոխուիլ: Քննարկելով դրամատան արտօնուեցաւ պարտքի դրամ առնել Արաբական Միացեալ Եմիրութիւններու «Չարգացումի հիմնադրամ»-էն: Նախապէս Զուեյթի մէջ կեդրոն ունեցող Արաբական զարգացումի հիմնադրամը 165 միլիոն ԱՄՆ տոլարի վարկ մը տուաւ եր Լիբանանի Բնակեցումի դրամատան: Կառավարութիւնը իր վերջին ժողովներէն մէկուն ընթացքին տուաւ այս արտօնութիւնը: Այս քայլը պիտի աշխուժացնէ շինարարութեան մարզը ու առիթ պիտի ընծայէ երիտասարդ պաշտօնէտներու պարտքի դրամ առնելու ու սեփական բնակարանի տեր դառնալու:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԿՈՎԿԱՍ ԱՐԵՄՈՒՏՔԻՆ ՅԵՆԵԼՈՒ ԸՎԱԶԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Եւրոպական միութիւն եւ ԱՄՆ ամէն ճիգ կը թափեն Հայաստանի Հանրապետութիւնը սիրաշահելու ու զայն իրենց քաղաքական համակարգին միացնելու համար: Արցախի պատերազմէն ետք 2020 թուականին, վարչապետ Նիկոլ Փաշինեան սկսաւ իր դէպի Արեւմուտք թեքումի քաղաքականութիւնը, դժգոհելով Ռուսական Դաշնութեան ղեկավարած ՀԱԴԿ ապահովական դաշինքի քաղաքականութենէն: Եւրոպական միութիւն եւ ԱՄՆ օգտուեցան այս վիճակէն ու բարեկարգումի ու դեմոկրատացումի քայլերը յառաջ տանելու պատճառաբանութեամբ սկսան Հայաստանի Հանրապետութիւնը կամաց-կամաց հեռացնել Ռուսական Դաշնութեան հովանաւորութիւնը վայելող կառույցներէ: Պիւրիսի մէջ կայացած վերջին ժողովին, Եւրոպական միութիւնը Հայաստանին խոստացաւ 270 միլիոն եւրօ, իսկ ԱՄՆ՝ 65 միլիոն ԱՄՆ տոլար:

Սակայն, այս քաղաքականութիւնը հաշտ աչքով չի դիտուիլ Իրանի, Ռուսիոյ եւ Ատրպէյճանի կողմէ: Ապագան լի է ապակայունացումի շատ մը գործօններով ու առճակատումի քաղաքականութիւնը դրական ազդեցութիւն չի կրնար ունենալ:

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼ ԵՒ ԱՌԻԿԷ ԹՈՒՐԵՒՆՆԵՐ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՆԵԸ

Թուրքիոյ քաղաքապետական ընտրութիւններուն, ընդհիմադիր ժողովուրդի Հանրապետական կուսակցութիւնը շահեցաւ քուէարկողներու քուէին 37,8 առ հարիւրը, մինչ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի վարած Արդարութիւն եւ Բարգաւաճում կուսակցութիւնը շահեցաւ քուէներուն 35,5 առ հարիւրը: Այսպիսով, մեծ քաղաքներու քաղաքապետարանները մնացին կամ անցան ընդհիմադիր կուսակցութեան: Կարգ մը վերլուծողներ այս քուէարկութեան արդիւնքը կը համարեն քննութիւն մը յաջող երեւոյթի արդիւնք: Սուրիոյ հետ սահմանի վրայ մը եւ պարտքի տոկոսի յաւելումը սղաճը գսպելու համար երկու ժխտական գործօններ են, որոնք պիտի վնասեն տնտեսութեան:

ԱՍԻԱ ԾԱՓՈՆԻ ՄԱՐՏԱՅՐԱՒԵՐՆԵՐԸ

Ճափոնի տնտեսութիւնը կը համարուի աշխարհի 4-րդ տնտեսութիւնը: Բ. Համաշխարհային պատերազմէն ետք Ճափոն արձանագրեց տնտեսական մեծ վերելք շնորհիւ Ելէկտրոնային եւ ինքնաշարժներու արտադրութեան ճարտարաբանութեան: Սակայն, Չինաստանի եւ Շայրագոյն Արեւելքի այլ ճարտարարտօնական երկիրներու մրցակցութիւնը դժուարացուց Ճափոնի գործը:

Անկում արձանագրող բնակչութեան թիւը ծնելիութեան նուազումին պատճառով կրճատեց աշխատողներու թիւը ու նուազեցուց սպառումի ծաւալը: Այս եր հիմնական պատճառներէն մէկը երկրի տնտեսութեան աճի նուազումին: Ճափոնի եւնը վերջին տասը տարիներուն արժեզրկուեցաւ ԱՄՆ տոլարին դիմաց 30 առ հարիւր համեմատութեամբ: Այս արժեզրկումը եւ որ առիթ ընծայեց շատ մը ճափոնական ընկերութիւններուն իրենց արտադրութիւնը արտածելու: Ուրիշ հարց մը, որ կը դիմագրաւէ Ճափոնը սպառումի նուազումն է, որովհետեւ վերջին տասը տարիներուն գործաւորներուն ու պաշտօնէտներուն աշխատավարձերը չեն աւելցած:

ԵՐՈՊԱ ԼՈՐ ՊԱՏԺԱՄԻՉՈՑ

Եւրոպական միութեան խորհուրդը խստացուց Ռուսիոյ դէմ առնուած պատժամիջոցները: Ըստ Նոր օրէնքին, ամէն երկիր կամ ընկերութիւն որ կը շրջանցէ Ռուսիոյ դէմ առնուած պատժամիջոցները՝ պիտի ենթարկուի տուգանքի: Շատ մը երկիրներ կը գնէին ապրանք ու զայն կը վաճառէին Ռուսիոյ: Այս օրէնքը ուղղուած է այն երկիրներուն դէմ, որոնք կ'օգնեն Ռուսիոյ շրջանցելու համար պատժամիջոցները:

ԱՄԵՐԻԿԱ ԳԱՆԱՏԱ ԵՒ ԳՈՐԼՈՄՊԻԱ

Գանատայի մէջ վարչապետ Ճասթին Թրուտոյի վարած Ազատական կուսակցութեան մէջ ճեղքեր սկսած են երեւիլ: Թրուտոյի վարած տնտեսական քաղաքականութիւնը սկսած է ազդել կուսակցութեան ժողովրդականութեան վրայ: Ընդդիմադիր Պահպանողական կուսակցութիւնը հարցախոյզներուն մէջ սկսած է յառաջդիմել: Թրուտոյի հաստատած տուրքը բնածխական կազի կամ ածխածին երկթթուակի (carbon dioxide) արտանետման համար ու բնակարաններու եւ ունեւիքի սղաճը սկսած են ժխտական

ազդեցութիւն ունենալ իր ժողովրդականութեան վրայ: Գոլումպիա եւ Պրագիլ սկսած են գործադրել Ամազոնի անտառը պաշտպանելու իրենց կառավարութիւններուն կայացուցած որոշումները: Անցեալ տարի Հարաւային Ամերիկա կորսնցուց իր անտառներու 2000 քառակուսի քիլոմէթր: Այս կը համարուի նուազում անցեալ տարիներուն հետ համեմատած: 2001 թուականէն ի վեր Հարաւային Ամերիկա կորսնցուց իր անտառներուն 30 առ հարիւրը: Պրագիլ, Գոլումպիա եւ Պոլիվիա ունին այդ անտառներուն մեծամասնութիւնը:

ԱՄ ԿՏԱՆԳԱՒՈՐ ՀՈՒՆՎՈՅԹ

Ըստ ԱՄՆ-ի ամենամեծ դրամատան՝ «JPMorgan Chase»-ի գործադիր տնօրէն Ճեյմի Տայմընի, Միացեալ Նահանգներու տնտեսութիւնը կը դիմագրաւէ վտանգաւոր հոլովոյթներ: Առաջինը, միջազգային աշխարհաքաղաքականութեան մէջ արձանագրուող անկայուն վիճակն է այն երկրփեղկումին պատճառով, որ սկսաւ երեւիլ Արեւելքի Արեւմուտքի միջեւ: Ուրբանիոյ պատերազմը եւ Կազախի պատերազմը իրենց հետեւանքներով ստեղծած են անկայուն վիճակ համաշխարհային տնտեսութեան մէջ: ԱՄՆ-ի առաջնորդող դերը հարցականի տակ է ներկայիս արտաքին պատերազմներու եւ ներքին՝ երկու կուսակցութիւններուն միջեւ եղող խոր տարակարծութեան պատճառներով: Ըստ Տայմընի, վերջին 20 տարիներուն Չինաստան ծրագրուած աշխատանք տարաւ իր տնտեսական կառուցները զարգացնելու եւ շատ մը երկիրներ մուտք գործելու համար, մինչ Արեւմուտքը որեւէ քայլ չկատարեց այդ ուղղութեամբ:

ԱՄՆ-ի բաժնետոմսերու շուկայի մասնագետ մը յայտարարեց, թէ ներկայիս շուկան կը գտնուի անապահով վիճակի մէջ, որովհետեւ բաժնետոմսերուն գիները իսկական չեն, այլ կը ներկայցնեն անոնց արուեստականօրէն ուժեղացուած գիները: Երկրին մէջ արձանագրուած սղաճը պիտի ազդէ սպառումին վրայ եւ բոլոր այն բաժնետոմսերը որոնք առնչուած են սպառումի հետ պտեղ է գինի նուազում արձանագրելու: Հակառակ պարագային, անոնք կը կազմեն փուչիկ մը (bubble), որ ուշ թէ կանուխ պիտի պայթի իր ժխտական հետեւանքներով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՎԱՐԿ ՈՍԿԻԻ ԳԻՆԻ ՅԱՒԵԼՈՒՄ

Անցեալ շաբաթ ոսկիին գինը յաւելում արձանագրեց ու մէկ օնը անցաւ 2400 ԱՄՆ տոլարի սահմանը: Տարուան սկիզբէն ի վեր ոսկիին գինը աւելցած է 16 առ հարիւր համեմատութեամբ:



Գինի յաւելումին հիմնական պատճառներէն է աշխարհաքաղաքական տնտեսական անկայուն վիճակը: Մարդիկ ոսկին կը նկատեն վտահեղի գոյք ու սպառումը սկսած է յաւելում արձանագրել: Չինաստանի պահանջարկը նաեւ կը ճնշէ շուկային վրայ: Չինաստան իր օտար դրամանիշները սկսած է փոխարինել ոսկիով: Արժաթի գինը աւելցաւ 4 առ հարիւր համեմատութեամբ, փալլատիւմը աւելցաւ 2,7 առ հարիւր համեմատութեամբ, փալթիսի օսիին գինը անցաւ 1000 ԱՄՆ տոլարի սահմանը:

Ոսկիին գինը ցարդ կ'որոշուէր Արեւմուտքի շուկայի ցուցանիշներուն համեմատ: Ներկայիս տնտեսագետներ կը նկատեն Նոր ուղղութիւն մը, որ ոսկին կ'արժեւորէ ոչ որպէս տնտեսութեան օժանդակ մետաղ կամ դրամանիշը արժեւորող մետաղ, այլ մետաղ մը, որուն գինը կ'արժեւորուի պահանջարկի հիման վրայ: Ներկայիս այդ պահանջարկը կու գայ Արեւելքէն, մանաւանդ Չինաստանէն եւ Հնդկաստանէն: Ուրեմն, պէտք է նկատուի առնել այս հոլովոյթը ոսկիին արժեքը ճշդելու համար:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԵ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (Indicators)

Տնտեսական ցուցանիշները ցոյց կու տան տնտեսութեան վիճակը: Տնտեսութեան վիճակը կրնանք հասկնալ կարգաւորով երկրի մը կամ ընկերութեան մը տնտեսական ցուցանիշները: Կան ճիշդ ժամանակի ցուցանիշեր (real-time indicators), ուշ ցուցանիշեր (lagging indicators) եւ առաջնորդող ցուցանիշեր (leading indicators):

Երկրի համախառն արդիւնքը (GDP) եւ անգործութեան համեմատութիւնը (unemployment rate) ուշ ցուցանիշներ են, այսինքն անոնք յայտնի կը դառնան երեք ամիս ետք: Սպառողներու ցուցանիշը (consumer confidence) առաջնորդող ցուցանիշ է, այսինքն ան կ'արձանագրէ սպառողին վստահութիւնը սպառումէն ամիսներ առաջ: Այսինքն ամէն ցուցանիշ որ կ'արձանագրուի իրագործումէն առաջ՝ կը նկատուի առաջնորդող ցուցանիշ: Իսկ ճիշդ ժամանակի ցուցանիշ կը համարուի քրտիթ քարտ ունեցող մարդոց թիւը, ինքնաշարժներու ներկայի թիւը եւ ամէն ինչ որ հիմա կ'արձանագրուի:

Աղբիւրներ՝ «Տը Էքոնոմիսթ», «Ռաշա Թուտէյ», «Եւրասիանէթ.օրկ» եւ «Ալ Տիյար»

ՇՆՈՐՀԱԿԱՆԻ ԴՈՎՏ. ՀՐԱՅՐ ՃԵՊԵՃԵԱՆԻ ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ «ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ՝ ՏԵՍԻԼՔ, ԿԱՍՔ ԵՒ ՅՈՅԱ»

Սփիւռքի մէջ հետզհետեւ խամրող ու նստացող գրիչներու բացակայութիւնը եւ անհետացումը արդէն ինքզինքն բացատրող ու բացայայտող չոր իրականութիւն մըն է:

Եթէ անելի ընդհանրացնենք այս տխուր երեւոյթը, իր գանգալ կողմերով ու շերտերով, զայն դիտելով մտաւորականութեան պատուհանէն, դէմ-յանդիման կը գտնուինք խիստ մտահոգիչ ու տագնապեցուցիչ ամայութիւններու հետ, ուր հայ միտքի ու տեսիլքի, խոհականութեան ու կոչումի հեղինակները համարեալ հազուադէպ դարձած են հրապարակներէն:

Հայ գիրքն ու գրականութիւնը, հայ մամուլն ու հրապարակագրութիւնը, հայ գրողն ու մտաւորականութիւնը, յատկապէս հայ ժողովուրդի մնայուն լուսամտները, այսօր չեն այն ինչ որ էին նախապէս, չեն այն ինչ որ կը ներկայացնէին հեռաւոր թէ մօտակայ անցեալին:



Անշուշտ, այս բոլորը, մէկ օրէն միւսը չէ որ առաջացան, այլ բազմազոյն ու բազմակողմ պայմաններու բերմամբ, որոնց մասին խօսելը, քննարկելը կամ վերլուծելը կը կարօտի խոր մատնանշումներու եւ ակտիւ անհետաքննարկումներու, այդուհանդերձ, առանց արդարաւարտ փորձերու կամ ճշմարտութիւնը չտեսնելու հակուորութեան, կարելի չէ շրջանցել յամենայն ցարեք, թէ ինչու՞ այս պարագայութիւնը, անձնատուութիւնը ու նահանջատիրութիւնը, երբ ամէն ժամանակներէ անելի, մենք հրամայականօրէն կարիքը ունենք եւ ունինք հայ մտաւորականութեան շահակրութեան փայլքին ու լուսապայծառութեան:

Սակայն, որքան ալ տառապիք կամ անհանգստանաք այս եւ նման դէպքի ամբողջութիւն կամ խաւարամտութիւն տանող արահետներէն, մասամբ թէ անգոհացուցիչ ընթացքով, անկայման ալ կան, պիտի ըլլան, բարեբախտաբար, լոյսի եւ յոյսի ճառագայթումներ, որոնք հայապետութիւնը գոյամարտին մէջ կրնան մնալ իրենց պատուաբեր պատուանդանին վրայ, իւրաքանչիւր իր ուղիով, ներդրումով ու կարողութեամբ, սակայն եւ, անկայմանօրէն, միշտ անսալով իրենց դիրքին եւ առաքելութեան կանչին:

Թերեւս այս ոգին ու սլացիկութիւնն են, որոնք տակալին հայ մտաւորականութեան գոյութիւն կու տան բարախութեան ու զարկերակութեան դրական հնչեղութիւն, հոգ չէ թէ ոմանց պարագային որակն ու մակարդակը չըլլան արժանիութեան գոհացուցիչ սահմաններու մէջ, բայց անոնք ալ այն կամուրջներն են, որոնք իրենց գիրքերը կը նկատեն իրենց նախորդներուն հետեւելու ուխտաւորութեան ճամբուն մշակութիւնը:

Դոկտ. Հրայր Ծեպեճեանը, որ կը սերի Ծեպեճեան համանուն գերդաստանէն, յատկապէս իր հօր՝ արուեստագետ Ծեպեճեանի դաստիարակութեամբ եւ իր հօրեղբոր՝ բժշկապետ-գիտնական-մշակութաբան՝ հանրահռչակ Բրայր Ծեպեճեանի ժամանակակից արձագանքներով, որոնք այն յուսատու եւ արժանաւոր դէմքերն են, որ ազգային-կրօնական կեանքին մէջ ինքզինքն արժեքներու եւ արժեւորելու ընթացքի մը մէջ գտնուեցան:

Անտարանական ընտանիք մը սերած եւ անտարանական վարժարանի մը մէջ սնած Հրայրը իր հաւատքի արմատները ինչպէ՞ս կրնար գործացնել եւ ամրապնդել, երբ անոնք ամբողջովին կը խորհրդանշէին հայրենասիրութեան ու հայրենակարգչա-ծուրեղան առանցքային հունտեր, իրենց դալարութեամբ, գօտեպնդութեամբ եւ արտայայտչականութեամբ:

Իր դպրոցական ու համալսարանական, աստուածաշնչական ու հաստատանական ելիցն ու երթը, ընդելուզուած երփնութեամբ, նշխարներով թէ դրոշմներով, կը ձեւաւորուէին ու կը կազմաւորուէին, այդ բոլորը դրսեւորելու, յատկանշելու ու կերպաշնորհելու այնպիսի թռիչքով ու զարգացումով, որոնք պիտի դառնային իր ներհոգեպէս ու ներհայեացքային կեանքին հիմնական աղբիւրներէն, զանոնք-ամբողջովին նուիրելով ու մատուցելով իր աշխարհըմբռնումի վերագարթօնքեան պայծառութեան, երիտասարդական կորովով, բոլիս մտացիութեամբ եւ անմիջական լիութեամբ գանոնք դարձնելով կենդանի կողոզներ եւ ջինջ օրինակելիութեան համատեղելի ու համակերպելի գործընթացի ողջունելի ուղիներ:

Հրայրի ասպարեզային կեանքին մէջ նաեւ անկիւնադարձ մը հանդիսացաւ, երբ ան նշանակուեցաւ պատասխանատու պաշտօնի մը, դառնալով ընդհանուր քարտուղարը Արաբական Տօցի Աստուածաշունչի ընկերակցութեան, որ իրեն համար դարձաւ հանգրուանի մը ու տեսադաշտի մը լայնածիր կարելիութիւններով համակուած լրացուցիչ գօտեշրջան մը:

Արդարեւ, Հրայր ինքզինքն գտաւ նոր պարտաւորութեան մը դիմաց, իր մասնագիտական գործունեութեան զուգահեռ, իր շրջուն դերակատարութիւններէն օգտուելով, ծանօթանալու, շարունակելու եւ յարաբերելու բազմախառն խայտաբղետ հայկական շրջանակներու եւ ներկայացուցիչներու, անձնաւորութիւններու եւ հայրենակիցներու հետ, ինչ որ զինք մոզց գրիչով արտայայտուելու ազնիւ փորձութեան:

Եթէ, առ այդ, Հրայրը դպրոցական թէ համալսարանա-

կան տարիներուն, մերթ ընդ մերթ, իր միտքերն ու մտորումները, գաղափարներն ու խորհրդածութիւնները թողոթին կը յանձնէր, թէկուզ համեստ պայմաններու եւ հարթակներու վրայ, այս անգամ, շնորհիւ իր հանգամանքին, ինքզինքն ոչ միայն նուիրեալ նկատեց, այլեւ՝ անելի հասուն ու պատասխանատու, գաղութներու հանրայայտ մամուլին մէջ հանդէս գալու, անշուշտ, հայութեան ինքնութիւնը, կեանքը, կենցաղը, հոգեբանութիւնը, ապրելակերպը, նկարագիրը եւ ընդհանրապէս, անոնց ընդմէջէն, իր տեսակետները, առաջադրանքները, խոկումները կամ դատողութիւնները բարձրացնելու, միշտ ազգային ծառայութեամբ թէ իր մտաւորական պատասխանատուութեան հարազատ մնալու գիտակցութեամբ:

Անձնապէս եւ, իմ խմբագրական երակարմայ գործունեութեան ընթացքին, առիթը ունեցած եմ շփուելու երիտասարդ Հրայրին հետ ու տեսնելով անոր գրելու շնորհներն ու սերը, քաջալերած եմ անոր ելիցին, տեղ տալով անոր գրութիւններուն:

Այսօր, ուշագրաւ է, որ Հրայրին յօդուածագրութեան, հրապարակագրութեան, յուշագրութեան, հայագրութեան, գրուցագրութեան հարուստ հաւաքածոն հրապարակի վրայ է, ուր մէկտեղուած են անոր ամենէն շահեկան կտորները, զանոնք ընթերցող հասարակութեան սեփականութիւնը դարձնելու նախածեռնութեամբ:

Վստահաբար, այս հատընտիրը կը բնորոշուի ու կ'արժեւորուի ոչ միայն իր հրատարակչական տպագրութեամբ, այլ՝ այն նիւթերով, որոնք հայ իրականութենէն փրցուած ու քաղուած են, դառնալով Հրայրին գրառումներու հունձքին օգտաշատ բերքերը, իրենց գանգալն ու հարուստ ներդրանքները մտնելով եւ արձանագրութիւններով, որոնք իր գրչանունին կու տան յատուկ երանգ եւ արժէք:

Հինգ տարեշրջաններու (2018-2022) վրայ ներգրաւուած գրութիւնները կը բուրբեն անձնական, ազգային, գաղափարական, մարդասիրական, բարոյական ու կրօնագիտական բովանդակութիւններով համեմուած ճոխ ընտրանի մը, ուր Հրայրը ինքնուրոյն մօտեցումներով լոյսին կը բերէ մարդկային կեանքին հետ առնչուած բազմաթիւ երեւոյթներէն պատումներ, յարձակ կենդանի պատկերներով, պերճախօս տուեալներով, շարժուն դիպաշարերով, վարակիչ եղանակներով, ուր իր մտածումները, ըմբռումները, մտորումները, դիտարկումները, դատումները կը գրաւեն ընթերցողը, այնքան ատեն որ հոն կը պարզուին վճիտ իրականութիւններն ու կը դառնան կենսախիղճ թափանցիկութիւններ ու խօսուն ճշմարտութիւններ:

Եթէ Սփիւռքը կը հանդիսանայ Հրայրին ներաշխարհին ողնածոծը, նոյնքան ալ հայրենիքը կը ծածանի քիչ մը ամէն տեղ, մանաւանդ որ Հրայրը իր այցելութիւններով, ծանօթութիւններով, կապերով ու մերձեցումներով, իւրաքանչիւր պատեհ առիթով պատահիլով, մատուցելով, յուշիկ մը, վկայութիւն մը, տպաւորութիւն մը կը բերէ իր հետ, անոնցմէ տեղեակ պահելու համար սփիւռքահայ շրջանակներն ու ընթերցողները:

Իսկ կրօնաբարոյախօսական, դաստիարակչական, քրիստոնէական ու ներքարգչական նիւթերը, իրենց գանգալն ուրոտներով եւ գոյներով, յղումներով ու լիցքերով դարձեալ հատորին մէջ մնայուն ներկայութիւն են, որոնցմէ իւրաքանչիւրը իր մէջ կը պարունակէ տեղեկագրութիւն մը, մանրամասնութիւն մը, հետաքրքրասիրութիւն մը, քաջողակութիւն մը, որոնք կապուած են հայ կեանքին ու կերպարին, հայ հաւատքին ու մշակոյթին հետ, անգամ մը եւս ապացուցելով, որ Հրայրին ազգային-հայրենասիրական, հոգեւորական, հաւատարմագրական հիմքերը որքան ամրակուստ հորիզոնականներու վրայ կազմուած են ու որքան ինքնախօսական վրայ կը տողանցեն:

Ինչպէս կարգ մը յանձնառու մտաւորականներ ու հեղինակութիւններ, որոնք թէեւ նուազած են, բայց, կենդանիները յարգելի են, Հրայրը՝ իր ծառայողական գործով ու մտային արտադրողականութեամբ, արժանի է գնահատանքի ու շնոհաւորանքի, քանի կը մնայ հաւատարիմ եւ անձնուէր Ծեպեճեանական համանուն գերդաստանին, ամենայն լրջութեամբ ու հետեւողութեամբ շարունակելով մնալ արժանաւոր ժառանգորդ մը եւ գործնապաշտ գրիչ մը:

Յուսալով ու մաղթելով, որ Հրայրին օրինակը կը դառնայ նախանձելի խթան մը նոր սերունդէն ծնունդ առած նորանոր խոստմնալի յաջորդներու, կ'ըսենք. «Վարձքը կատար, գրիչդ դալար ու շունչդ անսպառ, սիրելի Հրայր»:

ՊՐՈՑԵՍ ԱՐԿԱՇԵԱՆ
ՊԵՂՈՒԹ
«Ազգակ» օրաթերթի «Փիւնիկ» սրահ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԸ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ ՍԵԱՌՏԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ

Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան 17-18 Ապրիլին այցով պիտի գտնուի Սեուտական Արաբիոյ Թագաւորութիւն. 2023 թուականի Նո-



յեմբերին երկու երկիրներուն միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատումէն յետոյ սա Հայաստանէն առաջին բարձրաստիճան այցն է Սեուտական Արաբիա:

Այցի շրջանակներուն մէջ նախարար Միրզոյեան հանդիպում պիտի ունենայ Սեուտական Արաբիոյ արտաքին գործերու նախարար արքայազն Ֆէյսալ պըն Ֆարհան Ալ Սեուտի հետ:

Նախատեսուած են Սեուտական Արաբիոյ գործընկերներու հետ նաեւ այլ հանդիպումներ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԵՄ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. ծայրագոյն պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ ընդունեց Հայաստանի Հանրապետութեան մէջ Եւրոմիութեան քաղաքացիական դիտորդական առաքելութեան ղեկավար Մարքուս Ռիթերը:



Ամենայն Հայոց կաթողիկոսը ողջունեց Մարքուս Ռիթերի այցը համայն հայութեան հոգեւոր կեդրոն՝ նշելով, որ այս հանդիպումը պատեհ առիթ է ծանօթանալու ԵՄ դիտորդական առաքելութեան առջեւ դրուած խնդիրներուն:

Վեհափառ Հայրապետը իր մտահոգութիւնը յայտնեց առկա լարուածութեան եւ սահմանամերձ բնակավայրերու ժողովուրդի ապահովութեան առնչութեամբ՝ ընդգծելով, որ Ատրպէյճանի ոտնձգութիւններն ու առաջադրուող պահանջները նոր անվտանգային մարտահրաւերներու առջեւ կը կանգնեցնեն Հայաստանը, նաեւ կը վտանգեն խաղաղութեան հաստատման բանակցային գործընթացը:

Նորին Սրբութիւնը գնահատեց բոլոր այն քայլերը, որ տիրող դժուարին իրավիճակին մէջ բարեկամ երկիրներու եւ միջազգային կառոյցներու աջակցութեամբ կ'ուղղուին ի նպաստ տարածաշրջանին մէջ խաղաղութեան ու կայունութեան վերականգնման:

Իր հերթին, ԵՄ դիտորդական առաքելութեան ղեկավարը Վեհափառ Հայրապետին տեղեկութիւններ փոխանցեց դիտորդական առաքելութեան գործունեութեան եւ սահմանային իրավիճակին վերաբերեալ՝ վստահեցնելով, որ կարելին ի գործ պիտի դրուի առաքելութեան կողմէ՝ նպաստելու սահմանային լարուածութեան նուազեցման ու Հայաստանի սահմանամերձ շրջաններուն մէջ կայունութեան հաստատման:

«ՄԻՆՃԱՐԻ ՄԵՋ ԵԶՏԻՆԵՐՈՒ ՆԿԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ ՀՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆ Է՝ ՄԵԿ ԴԱՐ ՏԱՐԵՐՈՒԹԵԱՄԲ» ԸՍԱԾ Է ՀՅՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՉԻՐԱՆՏԱՅԻ ԴԵՍՊԱՆ



Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպան Օլիվիէ Տըքոթիլին անդրադարձած է Հայաստանի խորհրդարանին կողմէ՝ 3 Օգոստոսը Հայաստանի մէջ որպէս Սիւնճարի մէջ եգոյններու ցեղասպանութեան գոհերու յիշատակի օր սահմանելուն:

X-ի իր եջով դեսպանը գրած է, որ Սիւնճարի մէջ եգոյններու նահատակութիւնը կրկնութիւնն է 1915 թուականին ցեղասպանութեան ենթարկուած հայերու նահատակութեան՝ մէկ դար տարբերութեամբ:

«Հայաստանի Ազգային ժողովը եգոյններու ցեղասպանութեան յիշատակի օրը ներառած է իր ազգային օրացոյցին մէջ», - նշած է ան՝ յատկապէս, որ հպարտ է այս պատմական օրը Հայաստանի Ազգային ժողովի դաւիթի մէջ ներկայացուցած է Ֆրանսան:

ՓՈՒՆԱԴՐԱԿԱՌԲԵՐ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՆ

Ստորև յիշյալ շրջաններն ղեկավարում է Պորժ Համուտ կը տեղի ունենա ԵՐԵՎԱՆԻՆ, ԺԱՄԸ 6:00ԻՆ:*

- ՀՅԳ «Ազատամարտ» ակումբ, Էջմիշի:
- ՀՅԳ «Տիգրան Շամիր» ակումբ, Մար Մելայել:
- Հայաշենի ժողովրդային տուն:
- «Ս. Գեորգ» եկեղեցու դիմաց, Համուտ:
- «Տիգրանի» ակումբ հայի Պատարի:
- ՀՄ Պերոթ ակումբ:
- «Ս. Յարոփին» եկեղեցու դիմաց, հայի Պատարի:
- ՀՅԳ «Է. Ավետիսյան» ակումբ, Ֆանար:
- ՀՅԳ «Նուշի» ժողովրդային տուն, Ուտուտ:
- ՀՅԳ «Գ. Լեզի» ակումբ, Ջարթ:
- Ուտուտայի ՀՄ ակումբ:
- «Անի» կեղրու, Լահր Մոթ:
- «Արարատ»-ՀՄԼՄ մարզաշտակարային համալիր, Մեղրի:
- Միսրիան շենքեր, Աթիխաս:
- Ժպլիկի Հայ կեղրու:
- ՀՅԳ «Ս. Ջեյրան» կեղրու, Այնճար:
- ՀՄ Աթիխաս ակումբ:
- «Մասիս» ակումբ Պորժ Համուտ:

*Վերադարձը ապահովված է երկ շրջաններում ներառելով Պորժ Համուտ



Կազմակերպության՝ Ս.Գ.Հ.Կ. ՍԱԳԱՏ ԳԻՒԼ - ՓԱՐԱՄԱՋ - ՏԱԻՈՍ մասնաճիղերուն

ՄՈՄԱՎԱՌՈՒԹԻՒՆ

Նուիրում ԵՂԵՌՆԻ 109-ամեակին

Մասնակցության՝ Հ.Մ.Մ. Պէյրուփի սկաուտական փողերախումբին

Տեղի կ'ունենայ Կիրակի, 21 Ապրիլ 2024-ին,
Երեկոյան ժամը 5:30-ին,
Հ.Մ.Մ.-ՄԱՄՄԻՍ ակումբին առջև:

Հրակեր

Ընդունելութիւն եւ ծաղիկներու դետեղում 5:30-ին
Պաշտօնական յայտագիր՝ 6:00-7:15



Պաշտօնապատկան
ԱՐԱՐԱԴ ԾՊՊԱՆԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Կազմակերպության
«Արարատ» (Հայաստան) եւ «Ծաղիկ» (Լիբանոս)
Պատկան-մշակութային թղթերու խմբագրութեանը
Չինաթիլի, խմբագիր
Յակոբ Տիւնայեան - Յակոբ Գյուլեայեան

ՊԱՐՈՅՐ ՍԵՒՎԿԻ (1924-1971)

Ծննդեան 100-ամեակին
Նուիրում գրական-գեղարվեստական երկերով

Գլխավոր քանակագր
Պոլտ. Սեւակ Ղազարեան
(Գրականագետ, քանակագիր, Պարոյր Սեւակի անուն տուն-թանգարանի տնօրէն, Պարոյր Սեւակի բողոք)

Ամուսնի կատարողներն են համուտ կու. զայ
Տիկին ԱՍԻ Սարաֆեան-Եփրեմեան
(Արհեստագործական կոմիտէի անդամ, յատուկ կրթական Լիբանանէ սյա անդամ)

Սրտի խստ
Տիկին Մուսաննա Գաբրիէլեան
(Նուիրում Ջարթեանի եւ հորն Պաշտօնական տուն-թանգարանի տնօրէն, Ս. Պարոյրի անուն երեսման պետական թանգարանի նախագահարմար փոխտնօրէնական գիտութիւններու ղրկար, փոխտնօր, ԵՄԼԵԱԵՕ-ի բնութիւնային անդամ, Հայաստանեան մասնաճիղի վարիչ) Աննեղ

Յամակ Յարոփեան
(Մոլորան, միջազգային մրցումներու դասընկեր)

Գալանմուրի Ուսանողներն են
Փրոֆ. Մուսաննա Գաբրիէլեան
Ելոթ կ'ունենայ
Հայաստանի պետական Ազգային
ակադեմիական երգչախումբը

Գեղարվեստական դիմապատ եւ գլխավոր խմբավար
Մայայրո Յովհաննէ Չեքիմեան
(ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պետական մրցանակներու դափնեկիր, երեսման կոմիտէի անուն պետական երաժշտանոցի փրոֆեսոր, Հայաստանի ազգային երգչու)

Տեղի կ'ունենայ Երուշաղէ, 22 Ապրիլ 2024-ին, երեկոյան ժամը 19:00-ին, կոմիտէի անուն կանոնադրի երաժշտութեան տուն մէջ, Խասանեան 1

Սրտի մտադր կ'արտօնուի ժամը 18:30-ին պետա:
Յայտագիր կը սկսի ժամը 19:00-ին:

Կազմակերպիչ յանձնախումբին Խոս կարելի է կապ հաստատել՝ E-mail: dzaghig2004@yahoo.com
Ֆեռ. 098 685057 (Երեսման) - 03-685058 (Պէյրուփ)

UNFSC USUS 1



Ս.Գ.Հ.Կ. «Յ. Կոմիտէի» մասնաճիղ

Ապրիլեան Ոգեկոչում Հայոց Տեղասպանութեան 109-րդ տարելիցին առթիւ:

Տեղի կ'ունենայ, Հինգշաբթի, 18 Ապրիլ 2024ի երեկոյան, ժամը 8-ին,
Հ.Մ.Մ. Աթիխասի ակումբի սրահին մէջ:

Օրուան բանախօս՝ Ընկ. Նազարեթ Ճերճեան

Հրակեր

www.araraddaily.com



Կազմակերպության՝ Ս.Գ.Հ.Կ. «Արարատ» մասնաճիղի վարչութեան Ս.Գ.Հ.Կ. «Ժիրայր Մուրատ» մասնաճիղի վարչութեան

ՄՈՄԱՎԱՌՈՒԹԻՒՆ

Նուիրում Հայոց ցեղասպանութեան 109-ամեակին

Յայտագիր՝
Մասնակցության՝ Հ.Մ.Մ. Պէյրուփի Սկաուտական խումբին
եւ փողերախումբին
Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2024-ին,
Երեկոյան ժամը 4:00-ին, Նոր Հանր, Ս. Գեորգ եկեղեցու մօտ:

Հրակեր

ԱՐԱՐԱԴ ԳԻՒԼ ԿԵՂԵՆ

ԱՍԻՈՅ ՄԻՆՉԵՒ 23 ՏԱՐԵԿ.ԱՍԺԱԿԻ Ա. ՀԱՆԳՐՈՒՄ ԵԱԹԱՐ ՅԱՂԹԱՆԱԿՈՎ ՍԿՍԱՒ

Շաբթուան սկիզբը Զաթարի մարզադաշտերուն վրայ սկսան Ասիոյ մինչեւ 23 տարեկան տղոց ֆուտբոլի բաժնի մրցումները: Մասնակցող 16 հաւաքակազմները բաժնուած են չորս խմբակի: Իւրաքանչիւր խմբակի առաջին երկու դիրքերը գրաւող խումբերը պիտի անցնին քառորդ աւարտական փուլ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

Ա.խմբակ. - Աւստրալիա - Յորդանան 0-0
- Զաթար - Իստոնեգիա 2-0

պաշտպան ժիրայրսթ՝ 90-րդ վայրկեաններուն նշանակեցին խումբին կոլերը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Չելսի - Էվլորթըն 6-0
Դասաւորում. 1) Մանչեսթըր Սիթի 32 մ 73 կետ 76-32, 2) Արսենալ 32 մ 71 կետ 75-26, 3) Լիվըրպոլ 32 մ 71 կետ 72-31, 4) Ասթըն Վիլլա 63 կետ 68-49, 7) Մանչեսթըր Եուն. 32 մ 50 կետ 47-48, 9) Չելսի 31 մ 47 կետ 61-52
Ումբարկուներ. 1) Է.Ֆալկոստ - Մանչեսթըր Սիթի 20 կոլ, 2) Բ.Փալմըր - Չելսի 20 կոլ, 3) Օ.Ուաթքինգ - Ասթըն Վիլլա 19 կոլ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 28-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՆՈՎ ԵՒ ՓԻՆՏԻԿ ՅԱՂԹԵՅԻՆ

Հայաստանի ֆուտբոլի ախոյեանութեան 28-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, առաջատար Արմավիրի «Նուա» իր դաշտէն դուրս մրցեցաւ 8-րդ դիրքը գրաւող Չարենցաւանի «Վան»ին ղէմ ու արձանագրեց իր 20-րդ

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 29-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՊԱՅԵՐ ԼԵՎԵՐՔՈՒՂԸՆ ԱՆՈՅԵԱՆ

Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 29-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, առաջատար «Պայեր Լեվերքուզըն» իր դաշտին վրայ մրցեցաւ 12-րդ դիրքը գրաւող «Վերտեր Պրեմն»ի ղէմ, արձանագրեց իր 25-րդ յաղթանակը ու անհասանելի դարձաւ երկրորդ դիրքը գրաւող «Պայըրն Միւնիխ»ի համար: Խումբը շահեցաւ ախոյեանութեան տիտղոսը: Նիկերիացի յարձակող Պոնիֆաս տուգանայինով՝ 25-րդ, գուիցերիացի կիսապաշտպան Խաքա՝ 60-րդ, փոխարինող կիսապաշտպան



յաղթանակը: Միակ կոլը նշանակեց ումբարկու Արթուր Միրանեան, 90+1-րդ վայրկեանին: 2-րդ դիրքը գրաւող «Փիւնիկ» իր դաշտին վրայ յաղթեց 5-րդ դիրքը գրաւող «Ալաշկերտ»ին: Ֆրանսացի յարձակող Կոնսալվէս՝ 14-րդ եւ պոսնիացի յարձակող Եուրիշի՝ 28-րդ վայրկեաններուն նշանակեցին «Փիւնիկ»ի կոլերը: Փոխարինող ղանացի պաշտպան Սենսաի՝ 89-րդ վայրկեանին հաշիւը դարձուց 2-1: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Վան Չարենցաւան - Նուա Արմավիր 0-1
- Փիւնիկ - Ալաշկերտ 2-1
- Արարատ-Արմենիա - Արարատ 2-1
- Ուրարտու - ԲԿՄԱ Երեւան 2-1
- Վեսթ Արմենիա - Շիրակ Կիւմրի 1-0
Դասաւորում. 1) Նուա 62 կետ 59-26, 2) Փիւնիկ 60 կետ 62-24, 3) Արարատ-Արմենիա 58 կետ 54-27, 4) Ուրարտու 44 կետ 41-37, 5) Ալաշկերտ 38 կետ 42-37, 6) Արարատ 34 կետ 30-41:
Ումբարկուներ. 1) Ա.Միրանեան - Նուա 19 կոլ, 2) Մ.Եաթթար - Արարատ-Արմենիա 15 կոլ, 3) Ե.Օթուպանճօ - Փիւնիկ 13 կոլ:

Կիրձ՝ 68-րդ, 83-րդ եւ 90-րդ վայրկեաններուն նշանակեցին «Պայեր»ի կոլերը, Պոնիֆասի, Աստրիիի, Փալա-պիսի եւ Ալէքս Կրիմալտոյի փոխանցումներով: Երկրորդ դիրքը գրաւող «Պայըրն Միւնիխ» իր դաշտին վրայ ընդունեց Հայաստանի հաւաքակազմի յարձակող Սարգիս Աղամեանի մաս կազմած 17-րդ դիրքը գրաւող «Բեօլն»ի ղէմ ու յաղթանակ տարաւ, փորթուկալցի պաշտպան Ռաֆայէլ Կերրերոյի՝ 65-րդ եւ կիսապաշտպան Մուլըրի՝ 90+3-րդ վայրկեաններուն նշանակած կոլերով, կիսապաշտպան Զիմիչի փոխանցումով: Աղամեան հիմնական կազմին մէջ եր ու փոխարինուեցաւ 67-րդ վայրկեանին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Պայեր Լեվերքուզըն - Վերտեր Պրեմն 5-0
- Պայըրն Միւնիխ - ՖՍ Բեօլն 2-0
- Շթուֆկարթ - Այնթարխթ Ֆրանք. 3-0
- ՌՊ Լայփցիկ - Վոլֆսպուրկ 3-0
- Պոր. Մետշլընկաուպախ - Պորուսիա Տորթմունտ 1-2
Դասաւորում. 1) Պայեր Լեվերքուզըն 79 կետ 74-19, 2) Պայըրն Միւնիխ 63 կետ 82-36, 3) Շթուֆկարթ 63 կետ 67-34, 4) Լայփցիկ 56 կետ 67-33, 11) Պոր.Մետշլընկաուպախ 31 կետ 50-56, 17) Բեօլն 22 կետ 23-51
Ումբարկուներ. 1) Հ.Բէյն - Պայըրն Միւնիխ 32 կոլ, 2) Ս.Կիրասի - Շթուֆկարթ 25 կոլ, 3) Լ.Օփետտա - Լայփցիկ 22 կոլ:

Կազմակերպության՝ Ս.Գ.Հ.Կ. Պանդուխտ Մասնաճիղի վարչութեան

ՄՈՄԱՎԱՌՈՒԹԻՒՆ

Նուիրում Հայոց Տեղասպանութեան 109-ամեակին

Տեղի կ'ունենայ Երաթ, 20 Ապրիլ 2024-ին,
Երեկոյան ժամը 7:30-ին, Ռաուտայի Հ.Մ.Մ. ակումբին առջև:
Միեւնոյն ժամանակ պիտի կատարուի մոմերու բաշխում շրջանի բոլոր հայ ընտանիքներուն տունները:

ԱՆԳՆԻՈՅ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 33-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՉԵԼՍԻ ՅԱՂԹԱԿԱՆ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 33-րդ հանգրուանի վերջին մրցումին, 9-րդ դիրքը գրաւող «Չելսի»ն իր դաշտին վրայ մրցեցաւ 16-րդ դիրքը գրաւող Լիվըրպոլի «Էվլորթըն»ին ղէմ ու յաղթանակ տարաւ: Կիսապաշտպան Փալմըր՝ 13-րդ, 18-րդ, 29-րդ, տուգանայինով՝ 64-րդ, սենեկալցի յարձակող Ճեքսըն՝ 44-րդ եւ փոխարինող

Կիրձ՝ 68-րդ, 83-րդ եւ 90-րդ վայրկեաններուն նշանակեցին «Պայեր»ի կոլերը, Պոնիֆասի, Աստրիիի, Փալա-պիսի եւ Ալէքս Կրիմալտոյի փոխանցումներով: Երկրորդ դիրքը գրաւող «Պայըրն Միւնիխ» իր դաշտին վրայ ընդունեց Հայաստանի հաւաքակազմի յարձակող Սարգիս Աղամեանի մաս կազմած 17-րդ դիրքը գրաւող «Բեօլն»ի ղէմ ու յաղթանակ տարաւ, փորթուկալցի պաշտպան Ռաֆայէլ Կերրերոյի՝ 65-րդ եւ կիսապաշտպան Մուլըրի՝ 90+3-րդ վայրկեաններուն նշանակած կոլերով, կիսապաշտպան Զիմիչի փոխանցումով: Աղամեան հիմնական կազմին մէջ եր ու փոխարինուեցաւ 67-րդ վայրկեանին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Պայեր Լեվերքուզըն - Վերտեր Պրեմն 5-0
- Պայըրն Միւնիխ - ՖՍ Բեօլն 2-0
- Շթուֆկարթ - Այնթարխթ Ֆրանք. 3-0
- ՌՊ Լայփցիկ - Վոլֆսպուրկ 3-0
- Պոր. Մետշլընկաուպախ - Պորուսիա Տորթմունտ 1-2
Դասաւորում. 1) Պայեր Լեվերքուզըն 79 կետ 74-19, 2) Պայըրն Միւնիխ 63 կետ 82-36, 3) Շթուֆկարթ 63 կետ 67-34, 4) Լայփցիկ 56 կետ 67-33, 11) Պոր.Մետշլընկաուպախ 31 կետ 50-56, 17) Բեօլն 22 կետ 23-51
Ումբարկուներ. 1) Հ.Բէյն - Պայըրն Միւնիխ 32 կոլ, 2) Ս.Կիրասի - Շթուֆկարթ 25 կոլ, 3) Լ.Օփետտա - Լայփցիկ 22 կոլ:



Նոր Մտօրէն Մշակութային Միութիւն

ԱՐԵԳ

ՊԱՐԱՆՈՒՄԲԻ ԵԼՈՅԹԵՐ

AREK

DANCE TROUPE

31 ՄԱՅԻՍ - 1 ՅՈՒՆԻՍ - 2 ՅՈՒՆԻՍ

BOGHOS OPTIC

Autoroute Jdeideh,
Tel.: 01-870016

ARARAD DAILY NEWSPAPER

MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمينية | المحبرة المسؤولة: أني صرافيان (م.م.ش)
تصدر عن شركة مسيسر للمباعة والنشر